Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ—Թուրք-իրանական հարաբերությունները (1900—1914 թթ.). ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1974, 389 էջ։

Արևելքի երկրների սոցիալ-տնտեսական պատմության հարցերի ուսումնասիրության հետ մեկտեղ խիստ կարևոր նշանակություն ունի նաև այդ երկրների քաղաքական պատմության և միջազգային հարաբերությունների պրոբլեմների գիտական հետազոտությունը։ Սակայն ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան պատմագրության մեջ աննշան թիվ են կազմում այնպիսի ուսումնասիրությունները, որոնցում քննվում են Մերձավոր Արևելքի նախկինում խոշորագույն պետության՝ Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականության հարցերը, մասնավորապես հարևան երկրների նկատմամբ նրա նվաճողական քաղաքականությունը։ Դա մասամբ կարելի է բացատրել նրանով, որ սովետական և արտասահմանյան մի շարք գիտնականներ ելնելով Թուրքիայի կիսագաղութային իրավիճակից, այն դիտել են իբրև իմպերիալիստական պետությունների նվաճողական քաղաքականության օբյեկտ կամ նրանց կամքի սոսկական կամակատար։ Հետևաբար, նրանք Թուրքիան համարել են արտաքին քաղաքականության հարցերում նախաձեռնությունից և գործողությունների ազատությունից զուրկ պետություն։

Փաստերը, սակայն, խոսում են այն մասին, որ Օսմանյան կայսրության կախյալ վիճակը իմպերիալիստական պետություններից և նրա կիսագաղութ լինելը բնավ չէր խանգարում և չէր բացառում այն, որ սուլթանական Թուրքիան ինքնուրույնություն հանդես բերեր արտաքին քաղաքականության և դիվանագիտության ասպարեզում։ Հարկ է նշել, որ իմպերիալիզմի դարաշրջանում մեծ տերություններից տնտեսական կախումը չի նշանակում առհասարակ այս կամ այն կիսագաղութային, կախյալ պետության քաղաքական ինքնուրույնության լրիվ կորուստ, մանավանդ, եթե խոսքը վերաբերում է արտաքին քաղաքականության հարցերին և այնպիսի մի պետության, որպիսին էր Օսմանյան կայսրությունը։

Տարբեր երկրների իմպերիալիստների պայքարը կապիտալների ներդրման ոլորտների, արտահանության շուկաների և հումքի աղբյուրների համար գործունեության որոշակի ասպարեզ կարող է ընձեռել այս կամ այն կախյալ երկրի դիվանագիտությանը։ Այս դրույթի հիմնավորման լավագույն օրինակ կարող է ծառայել Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Իրանի նկատմամբ XX դ. սկզբից մինչև առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմն ընկած ժամանակահատվածում։ Վ. Բայբուրդյանի մենագրության մեջ համոզիչ կերպով ցույց է տրված, որ խուսանավելով տարբեր իմպերիալիստական պետությունների ու բլոկների միջև և շանալով ի շահ իրեն օգտագործել նրանցից որևէ մեկին, Օսմանյան կայսրությունը շատ դեպքերում է կարողացել վարել միանգամայն ինքնուրույն արտաքին քաղաքականություն։

Գրքի առաջին գլխում քննության է առնված Թուրք-իրանական հարաբերությունների պատմությունը՝ սկսած XVI դ., երբ Օսմանյան Թուրքիայի և Սեֆեյան Իրանի միջև լարված քաղաքական պայքար էր մղվում Մերձավոր և Միջին Արևելքում գերիշխանություն ձեռք բերելու նպատակով։ XIX դ. երկրորդ կեսին—XX դ. սկզբին Հյուսիսային Աֆրիկայում, Բալկաններում և Միջերկրականի՝ ավազանում իմպերիալիստական տերությունների գաղութային քաղաքականության ու բուն կայսրության ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների հետևանքով կրելով հակայական տարածքային կորուստներ և անկարող լինելով հաղթահարելու ավատական վարչակարգի ճգնաժամը, Թուրքական կառավարող շրջանները, այսուհանդերձ, կրկին փորձում էին բռնել ռազմական զավթումների ուղին։ Նման քաղաքականության նպատակն էր վերստին ամրապնդել սուլթանական կառավարության դիրքերը, շեղել կայսրության ժողովուրդների ուշադրությունը ներքին ծանր ցնցումներից և արտաքին-քաղաքական մշտական անհաջողություններից, զենքի օգնությամբ արմատախիլ անել բուն Թուրքիայում և հարևան

երկրներում ծավալված ազգային-ազատագրական պայքարը և, վերջապես, մասնակիորեն փոխհատուցել հսկայածավալ տարածքային կորուստները։

XX դ. սկզբին Օսմանյան կայսրության կառավարող շրջաններում վերջնականապես տիրապետող դարձավ այն տեսակետը, որ իմպերիալիստական պետությունները Թուրքիայի առջև անհաղթահարելի պատնեշ են ստեղծել նրա հետագա ընդարձակման համար ոչ միայն Արևմուտքում՝ Եվրոպայում, այլև Աֆրիկայում և Ասիայում։ Խիստ դժվարացել էր անգամ Թուրքիայի տարածքային status quo-ի պահպանման հարցը։ Նման պայմաններում, համաձայն թուրքական կառավարողների մտայնության, անհրաժեշտ էր կայսրության արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը տեղափոխել դեպի Արևելք՝ Իրան, Կովկաս, Աֆղանստան, Թուրքեստան և այլն։ Արդեն XX դ. սկզբին թուրքական պանիսլամիստների այս տեսակետը սկսեց գործնականում իրագործվել՝ բարձրացվելով պետական բաղաքականության մակարդակի։ Հեղինակը փաստերով ցույց է տալիս, որ Թուրքիան, ղեկավարվելով ֆեոդալա-կալվածատիրական պետության ռազմա-ֆեոդալական վերնախավի և թուրքական նորելուկ բուրժուազիայի շահերով, չնայած իր կիսագաղութային վիճակին, ձգտում էր իմպերիալիստական տերությունների հետ համատեղ մասնակցություն ունենալ Իրանը բաժանելու և մասնատելու գործում։ Այսպիսով, աշխատության հանգուցային խնդիրներից մեկն է Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականության ինքնուրույն, անկախ բնույթի բացահայտումը։

Գրքում հանգամանորեն լուսաբանվում են XX դ. սկզբից մինչև առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակաշրջանում Իրանում Թուրքիայի ծավալած գործունեության մասշտաբներն ու դինամիկան, թուրքական ռեակցիայի մեծապետական հավակնությունները Իրանական Ադրբեջանի և Քրդստանի նկատմամբ։ Հանգամանորեն վերլուծվում են նաև Իրան ներթափանցելու և տարածքային դոմինիոններ կատարելու ուղղությամբ Օսմանյան Թուրքիայի կիրառած մեթոդներն ու ձևերը, ցույց է տրվում, որ 1905—1911 թթ. իրանական հեղափոխությունը չախչախվել է ոչ միայն իմպերիալիստական Անգլիայի, ցարական Ռուսաստանի և նրանց ռեակցիայի համատեղ ջանքերով, այլև թուրքական կառավարող շրջանների իրականացրած ռազմական հակահեղափոխական ինտերվենցիայի շնորհիվ, մի հանգամանք, որը մինչ այժմ տեղեկանալի է պատմագրության կողմից։

Գրքում բացահայտվում է Թուրքիայի ագրեսիվ բաղաքականության դերը՝ Միջին Արևելքում իմպերիալիստական հակասությունների սրման գործում։ Այդ իսկ պատճառով աշխատության հետազոտության մեթոդ է հանդիսացել թուրք-իրանական հարաբերությունների քննությունը, երեք տերությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Գերմանիայի փոխհարաբերությունների նախախորհի վրա, քանի որ դրանք լական ազդեցություն ունեցան թուրք-իրանական հարաբերությունների զարգացման գործում։

Նկատի ունենալով, որ Իրանի նկատմամբ իր նվաճողական ծրագրերն իրականացնելիս թուրքական կառավարող շրջանները սերտորեն համագործակցում էին գերմանական իմպերիալիզմի հետ, գրքում որոշակի տեղ է հատկացված նաև գերմանական դաղութային քաղաքականության առանձնահատկությունների բնութագրմանը։ Մասնավորապես բացահայտվում է այն հարցը, որ թուրքական կառավարող շրջանների պանիսլամական և պանթուրանական ծրագրերը միշտ էլ բախման մեջ էին մտնում Գերմանիայի տոտալ հեգեմոնիզմի հետ։ Գերմանիան ոչ միայն չէր ցանկանում Միջին Արևելքում իր ապագա բաժնից մասն հանել Թուրքիային, այլ, ընդհակառակը, ծրագրում էր դաղութացնել ողջ Օսմանյան կայսրությունը։ Բայց եթե Գերմանիան ձգտում էր Թուրքիայի օգնությամբ Անգլիային ու Ռուսաստանին դուրս մղել Իրանից և, առհասարակ, Մերձավոր ու Միջինարևելյան շուկաներից և այդ պատճառով նեցուկ էր հանդիսանում Թուրքիայի «միրանական» բաղաբականությանը, ապա Օսմանյան կայսրությունն, իր հերթին, սեփական նպատակների համար, հաջողությամբ կարողանում էր օգտագործել գերմանական իմպերիալիզմի ուժն ու հզորությունը, նրա միջազգային կշիռը։ Այստեղից հեղինակը հանգում է այն եզրակացության, որ թեև նախապատերազմյան շրջանում գերմանական ազդեցությունը թուրքական կառավարող շրջանների վրա հասել էր աննախընթաց չափերի, սակայն երբեք Թուրքիան չվերածվեց գերմանական իմպերիալիզմի կույր գործիքի։ Գրքում բերված նմանօրինակ փաստերը կոչված են հերքելու ու հերքում են արևմտյան և սովետական պատմագրության մեջ ժամանակին լայն տարածում գտած և դեռ այժմ էլ որոշ չափով պաշտպանվող այն տեսակետը, որ Թուրքիան առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտավ և, ի միջի այլոց, առաջինը խախտեց Իրանի չեզոքությունը, բացառապես գերմանական իմպերիալիզմի թելադրանքով։

Դրում որոշ տեղ է հատկացված նաև, այսպես կոչված, «քրդական հարցի» վերլուծմանը, բանի որ այդ հարցը թուրք-իրանական հարաբերություններում խաղում էր կարևորագույն դեր։

Թուրքիայի նվաճողական քաղաքականությունն Իրանի նկատմամբ կարևոր տեղ է դրավել իր ժամանակի միջազգային բախումների շարքում, շոշափելով տարբեր իմպերիալիստական խմբավորումների շահերը և առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ևս սրելով մեծ տերությունների միջիմպերիալիստական հակասությունները։ Հետևաբար, թուրքական կառավարող շրջանների ագրեսիվ արտաքին-քաղաքական ծրագրերը անխզելիորեն կապված էին մեծ տերությունների իմպերիալիստական քաղաքականության և նրանց հակասությունների օգտագործման հետ։

Թուրքիայի նվաճողական քաղաքականությունն Իրանի նկատմամբ հիմնականում հետապնդում էր հետևյալ նպատակները. իրանական պետությունից կատարված տարածքային զավթումների հաշվին ընդարձակել Օսմանյան կայսրության գաղութային տիրույթները, իրագործել թուրքական կառավարող շրջանների պանիսլամական և պանթուրքական ծրագրերը Իրանական Ադրբեջանի և Քրդստանի նկատմամբ, ի չիք դարձնել Ռուսաստանի տնտեսական և բարոյական ազդեցության ուժեղացումը Հյուսիսային Իրանում, կասեցնել նրա հետագա առաջխաղացման փորձերը դեպի Մերձավոր Արևելք, մասնավորապես, դեպի Միջագետք, շրջափակել Անդրկովկասը և հարավից մոտենալ նրա սահմաններին, ուղի հարթել դեպի «ապագայի իդեալական երկիրը»՝ Թուրան, շեղել կայսրության ճնշված ժողովուրդների ուշադրությունը ներքին պրոբլեմներից և շախշախել նրանց ազգային-ազատագրական շարժումները, թուլացնել ռուսական հեղափոխության գաղափարական հզոր ազդեցությունը Թուրքիայի վրա, կասեցնել հեղափոխական ալիքի ներթափանցումը Իրանից Թուրքիա և այլն։

Իրանի նկատմամբ իր պանթուրքական և պանիսլամական ծրագրերն իրագործելու համար, ուղղակի զինված ինտերվենցիայից զատ, ԻԹԹիհադը փորձում էր օգտագործել նաև իրանական ժողովուրդների ազգային ինքնագիտակցության արթնացման փաստը, քարոզելով Թուրքիայի հովանավորությամբ Ադրբեջանի «ինքնավարության» և ապա Թուրքիային միացնելու գաղափարը։ Պանթուրքիզմի ագրեսիվ գաղափարախոսության գործնական իրականացման ճանապարհին «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեն ամենալուրջ խոչընդոտը համարում էր «հայկական պատնեշը», որը հաղթահարելու համար 1915 թ.ԻԹԹիհադը ձեռնամուխ եղավ Արևմտյան Հայաստանի և առհասարակ Թուրքիայի հայ ազգաբնակչության բնաջնջմանը։ Թուրանականության ճանապարհին ընկած երկրորդ խոշոր խոչընդոտ դիտվում էր Իրանը, ինչպես նաև Ռուսաստանի կողմից թուրքական առաջխաղացման դեմ կառուցված կուռ պատնեշը։

Սակայն զավթումների օսմանյան քաղաքականության գործիչները մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը չէին հաշտվել իրանական հողերից հեռանալու մտքի հետ։ Նրանք իրենց դաշնակցի՝ գերմանական իմպերիալիզմի, ամենագործուն աջակցությամբ պատրաստվում էին Իրանի, Անդրկովկասի, Միջին Ասիայի և Աֆղանստանի նկատմամբ կենսագործել իրենց պանիսլամական ծրագիրը, «մեծ թուրքական կայսրություն» ստեղծելու պանթուրքական դաղափարը։ Այդ ծրագրումներն իրագործելու նպատակով էլ 1914 թ. Թուրքիան նետվեց համաշխարհային պատերազմի թոհուբոհի մեջ, առաջին հերթին փորձելով զենքի ուժով ապահովել իր «կենսական շահերը» Իրանում։

Վ. Բայբուրդյանի աշխատությունը գրված է հարուստ փաստական հենքի վրա. օգտագործված են ռուսական արխիվների նյութերը, տպագիր գրականություն և մամուլ՝ արևմտաեվրոպական լեզուներով, ինչպես նաև պարսիկ, թուրք և հայ հետազոտողների բազմաթիվ աշխատություններ։ Անկասկած, աշխատությունը մեծապես կշահեր, եթե տրվեր աղբյուրների և գրականության հանգամանալից տեսություն, ինչպես նաև առաջաբան ու եզրափակում։ Մասնակի թերություններից են անունների տարընթերցումները։ Կարծում ենք, որ հեղինակը պետք է ավելի հանգամանալից խոսեր այսպես կոչված «պարսկական ժառանգության» նկատմամբ թուրքական հավակնությունների մասին XVIII դ., որը գաղափարական առումով նախորդել է թուրքական հետագա քաղաքականությանը Իրանի նկատմամբ։

Վ. Բայբուրդյանի դրախոսվող գիրքը կարևոր արևելագիտական հետազոտություն է, որը նոր լույս է սփռում թուրքական դիվանագիտության մեթոդների վրա, ինչպես նաև բացահայտում է պանիսլամիզմի և պանթուրքիզմի ռեակցիոն էությունը։

Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու